ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ
ՏԻԿԻՆ ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻՆ

20.09.2022թ.

ՀԱՂՈՐԴՈՒՄ
հանցագործության մասին

1. Դեպքի փաստական հանգամանքները

2022 թվականի սեպտեմբերի 15-ին MediaHub.am լրատվական կայքի լրագրող Անի Գևորգյանը, հավատարմագրված լինելով ՀՀ Ազգային ժողովի գործունեությունը լուսաբանելու համար և հաշվի առնելով, որ նույն օրն Ազգային ժողովում կայանալու է հերթական նիստը, իր մասնագիտական գործունեությունը կատարելու նպատակով բազմաթիվ այլ լրագրողների հետ այցելել է ՀՀ Ազգային ժողովի վարչական շենք (ք.Երևան, Բաղրամյան 19): Խորհրդարանի միջանցքներում հանդիպելով տարբեր պատգամավորների՝ լրագրող Անի Գևորգյանը նրանց հետ ունեցել է հարցազրույցներ: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի քվեարկության համար նախատեսված սրահում հարցեր է ուղղել ՀՀ ԱԺ իշխող խմբակցության պատգամավոր Քրիստինե Պողոսյանին, ասելով՝ «մի տան օրինակ ցույց տվեք» նկատի ունենալով նույն պատգամավորի կողմից արված հայտարարությունը, թե ընդդիմության որոշ ներկայացուցիչներ նախորդ օրն այցելել են պատգամավորների տները, որպեսզի վերջիններիս նկատմամբ ճնշումներ գործադրեն: Հարցին ի պատասխան պատգամավոր Քրիստինե Պողոսյանը ասել է՝ «Լավ ա չես ասում՝ լավ ա, որ մարդ չի մահացել»: Այս վերջին հայտարարությանը լրագրող Անի Գևորգյանն արձագանքել է՝ «Օրինակ՝ 2018 թվականի հեղափոխության ժամանակահատվածում մարդ մահացել է»: Այս դիտարկմանն ի պատասխան պատգամավոր Քրիստինե Պողոսյանն ասել է, թե լրագրողը հորինում է: Լրագրողը պատգամավորին հիշեցրել է, որ պատգամավոր է և իր լեքսիկոնը պետք է կարգավորի, որին ի պատասխան պատգամավորն ավելի է լարել իրավիճակը և հայտարարել է՝ «ոնց ուզում եմ ինձ պահում եմ, հարց ունե՞ս: Կպի գործերիդ հա՞: Գնա ընգեր ստեղից, դու էլ լրագրող չես: Գնա ասում ես քեզ, գնա ստեղից ասում եմ քեզ»[1]: Պատգամավոր Քրիստինե Պողոսյանի վարքագծի անթույլատրելիության մասին է վկայում այն հանգամանքը, որ նշված խոսակցության ընթացքում վերջինիս փորձում է հանգստացնել մեկ այլ պատգամավոր, որը փորձում է Քրիստինե Պողոսյանին հեռացնել այդ տարածքից, նույնիսկ՝ Քրիստինե Պողոսյանն այնպիսի լեքսիկոն է օգտագործում, որ կողքին կանգած պատգամավորը ստիպված է լինում ձեռքի ափով փակել նրա բերանը: Սրան հաջորդում է պատգամավոր Քրիստինե

[1] https://www.youtube.com/watch?v=k6kUCqWwGkU (1:49-րդ րոպեից)

Պողոսյանի էլ ավելի ոչ կոռեկտ վարքագիծը, մասնավորապես՝ նա լրագրողին ասում է՝ «քո հետ, անձամբ, ոնց ուզեմ խոսելու եմ»: Ավելին՝ ակնհայտ է դառնում Քրիստինե Պողոսյանի անպատժելիության զգացումը, որն էլ արտահայտվում է՝ «գնա բողոքի, բողոք ներկայացրու» արտահայտությամբ: Այնուհետև նրան են մոտենում այլ պատգամավորներ և փորձում են կրկին հեռացնել «կարգազանց» պատգամավորին: Այդ ընթացքում Քրիստինե Պողոսյանը փորձում է սեղանին դրված առարկայով հարված հասցնել լրագրողին, որը նրան չի հաջողվում, քանի որ մյուս պատգամավորը բռնում է ձեռքից: Այնուհետև պատգամավոր Քրիստինե Պողոսյանին հաջողվում է հեռացնել տարածքից: Հարկ է նկատել, որ պատգամավորի այդպիսի վարքը հաջորդել էր ընդամենը լրագրողի հարցին, որը հենց լրագրողի մասնագիտական գործունեության իրականացման ձևերից մեկն է:

Հատկանշական ենք համարում այն հանգամանքը, որ այդ օրվա ընթացքում իշխանական բազմաթիվ պատգամավորներ ուղիղ թիրախավորել էին նույն լրագրողին՝ Անի Գևորգյանին: Օրինակ՝ պատգամավոր Լենա Նազարյանը լրագրող Անի Գևորգյանին ասում է, թե վերջինս արժանի չէ, որ պատասխանի նրա հարցերին[2]: Պատգամավոր Խաչատուր Սուքիասյանը լսելով լրագրող Անի Գևորգյանի հարցերը՝ հայտնում է, որ հենց այդ լրագրողին հարցազրույց չի տալիս[3] և բազմաթիվ այդպիսի դեպքեր: Այս հանգամանքը վկայում է, որ խորհրդարանի իշխող խմբակցության անդամները որոշում ունեն կազմակերպված ձևով խոչընդոտներ ստեղծել լրագրող Անի Գևորգյանի գործունեության դեմ:

Բացի դրանից, առանձին ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ լրագրող Անի Գևորգյանը խորհրդարանի ղեկավար Ալեն Սիմոնյանի հետ փորձում է անցկացնել հարցազրույց, նրան տալիս է հարցեր, որին ի պատասխան Ալեն Սիմոնյանը կոպտորեն, լրագրողի արժանապատվությունը նսեմացնելու եղանակով հրաժարվում է դրանց պատասխանելուց պնդելով, թե այդ լրագրողն արժանի չէ, որ պատասխանի հարցերին[4]:

Այդ ընթացքում հանդիպելով ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանին, լրագրողն իր մասնագիտական գործունեության շրջանակներում փորձել է հարցեր է տալ, սակայն վերջինս տեսնելով, որ ներկա են նաև ոչ ցանկալի լրագրողներ՝ հայտնել է, որ կպատասխանի միայն իր ընտրած լրագրողներին, այն էլ առանձին հանդիպմամբ, որը պետք է կազմակերպի իր մամուլի խոսնակը[5]: Բացի այդ, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը ինչպես այդ օրը, այնպես էլ նախորդող օրերին լրագրող Անի Գևորգյանի նկատմամբ ցույց է տվել ընդգծված բացասական վերաբերմունք, որն արտահայտվել է հեգնանքով և բացահայտ ցինիզմով, ինչպես նաև զրպարտչական արտահայտություններով[6]:

Այնուհետև, Ալեն Սիմոնյանը տեղեկանալով, որ լրագրող Անի Գևորգյանի և ՔՊ խմբակցության պատգամավոր Քրիստինե Պողոսյանի միջև տեղի է ունեցել միջադեպ, եկել է ԱԺ միջանցքի այն հատվածը, որտեղ հավաքված են եղել բազմաթիվ լրագրողներ: Բոլորի ներկայությամբ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հրամայել է ԱԺ աշխատակազմի

---

[2] https://www.youtube.com/watch?v=N242tCX8p7o
[3] https://www.facebook.com/mediahubsocial/videos/416205077099605
[4] https://www.facebook.com/mediahubsocial/videos/472483364768226
[5] https://www.youtube.com/watch?v=k6kUCqWwGkU (05:10-րդ րոպեից)
[6] https://www.youtube.com/watch?v=7TogaeH6rfU

ղեկավարին և պետական պահպանության ծառայության աշխատակիցներին՝ խորհրդարանի շենքից ուժով հեռացնել լրագրող Անի Գևորգյանին և Yerevan.Today լրատվական կայքի լրագրող Սյուզի Բաղդասարյանին:

Ալեն Սիմոնյանն ԱԺ աշխատակազմի ղեկավարին ասել է՝ «Ազգային ժողովից դուրս ես հանում Անիին և Սյուզիին Բաղդասարյան», որի ընթացքում Անի Գևորգյանը փորձել է ճշտել այդպիսի գործողության իրավական հիմքը, բարձրաձայն հարցնելով՝ «Ի՞նչ իրավունքով եք Ազգային ժողովից դուրս հանում», որին ի պատասխան Ալեն Սիմոնյանը շարունակելով իր բանավոր հրամանի տեքստը՝ ասել է. «Ազգային ժողովի բնականոն գործունեությունը և քվեարկությունը տապալելու համար էս երկու լրագրողներին ու օպերատորներին, ՊՊԾ-ին բան արեք թող տանեն սրանց, Ազգային ժողովի շենքից դուրս»: Որից հետո Անի Գևորգյանը բարձրաձայն պնդել է, որ իրավունք չունեն իրենց շենքից հեռացնելու, ինչին Ալեն Սիմոնյանը պատասխանել է՝ «Կհանեմ կտեսնաս»: Այնուհետև Անի Գևորգյանը նստելով ԱԺ միջանցքի աստիճաններին բարձրաձայն հայտարարել է, որ ինքն այդտեղից չի հեռանալու, քանի որ չի ներկայացվել գրավոր որոշում, ինչին հաջորդել է ՊՊԾ երկու ծառայողների կողմից ֆիզիկական ուժի գործադրմամբ, թևերը ոլորելով, քարշ տալով լրագրող Անի Գևորգյանին ԱԺ շենքից հեռացնելը[7]:

2. Իրավական հիմքերը և հիմնավորումները

- ՀՀ քրեական օրենսգրքի 237-րդ հոդվածը նախատեսում է պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված հետևյալ արարքը.

<u>Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելը</u>

1. Լրագրողին տեղեկություն տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը կամ նրա մասնագիտական օրինական գործունեությունն այլ կերպ խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության

[7] https://www.youtube.com/watch?v=k6kUCqWwGkU

սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է լրագրողի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

Գտնում ենք, որ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի և ՊՊԾ ծառայողների արարքներում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 237-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշներ:

Այսպես, 2022 թվականի սեպտեմբերի 15-ին MediaHub.am լրատվական կայքի լրագրող Անի Գևորգյանը, հավատարմագրված լինելով ՀՀ Ազգային ժողովի գործունեությունը լուսաբանելու համար և հաշվի առնելով, որ նույն օրն Ազգային ժողովում կայանալու է հերթական նիստը, իր մասնագիտական գործունեությունը կատարելու նպատակով բազմաթիվ այլ լրագրողների հետ այցելել է ՀՀ Ազգային ժողովի վարչական շենք (ք.Երևան, Բաղրամյան 19): Խորհրդարանի միջանցքներում հանդիպելով տարբեր պատգամավորների՝ լրագրող Անի Գևորգյանը նրանց հետ ունեցել է հարցազրույցներ: Այդպիսով լրագրող Անի Գևորգյանը, ինչպես մյուս օրերին, այդպես էլ այդ օրը, երբ գտնվել է Ազգային ժողովի վարչական շենքում, իրականացրել է լրագրողի մասնագիտական օրինական գործունեություն: Լրագրողն ինքնուրույն է ընտրում այն ժամանակահատվածը, որի ընթացքում ցանկանում է մնալ խորհրդարանի շենքում և կատարել իր աշխատանքը: Այդպիսի աշխատանքը, մասնավորապես, իրականացվում է տարբեր պատգամավորների և կառավարության անդամների հետ հարցազրույցներ վարելով և խորհրդարանի նիստերին հետևելու և դրանց վերաբերյալ հրապարակման ենթակա լրատվական նյութեր պատրաստելու եղանակով: Այսինքն, Անի Գևորգյանը, հարցեր տալով որևէ պատգամավորի՝ չէր կարող իրականացնել ապօրինի գործունեություն, այն էլ՝ Ազգային ժողովի բնականոն գործունեությունը և քվեարկությունը տապալելը: Ավելին, որևէ նիստ չի տապալվել, քանի որ նույնիսկ փաստական հանգամանքներում նկարագրված դեպքի ընթացքում Ազգային ժողովի նիստը եղել է բնականոն ընթացքի մեջ: Իսկ ՍԴ դատավորի քվեարկությունը, հենց այդ ժամանակ շարունակվել է, որևէ վայրկյան չի դադարել և ավարտվել է, արդյունքները հրապարակվել են: Ուստի, հիմնազուրկ են պնդումները, թե լրագրող Անի Գևորգյանը տապալել է ԱԺ նիստը կամ քվեարկությունը: Հիմնազուրկ է նաև պնդումը, թե ԱԺ նախագահն իրավունք ուներ այդպիսի հիմքով լրագրողներին ԱԺ շենքից հեռացնելու հրաման տար: Ուստի՝ լրագրողին ԱԺ շենքից ֆիզիկական ուժի գործադրմամբ հեռացնելով՝ նրան արգելվել է ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, լուսաբանել ԱԺ գործունեությունը: Այդ կերպ Ալեն Սիմոնյանն օգտագործելով ԱԺ նախագահի կարգավիճակը, իրենից իշխանական լծակներով կախվածության մեջ գտնվող անձանց՝ ՊՊԾ ծառայողներին, դրդել է խոչընդոտել լրագրող Անի Գևորգյանի մասնագիտական օրինական գործունեությանը, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 46-237-րդ հոդվածներով նախատեսված հանցավոր արարք, որն էլ անձամբ կատարել են ՊՊԾ ծառայողները:

- ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված հետևյալ արարքը.

Առողջությանը թեթև վնաս պատճառելը

1. Մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելը, որն առաջացրել է՝

1) առողջության կարճատև քայքայում կամ

2) ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Գտնում ենք, որ Ազգային ժողովի պատգամավոր Քրիստինե Պողոսյանը թույլ է տվել արարք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին հոդվածով նախատեսված արարքի հանցափորձ:

Այսպես, ՀՀ ԱԺ պատգամավոր Քրիստինե Պողոսյանը փորձում է սեղանին դրված առարկայով հարված հասցնել լրագրող Անի Գևորգյանին, որն ավարտին չի հասցնում անկախ իր կամքից, քանի որ մեկ այլ պատգամավոր, որն այդ պահին կանգնած էր Քրիստինե Պողոսյանի կողքին, բռնում է ձեռքից: Այնուհետև պատգամավոր Քրիստինե Պողոսյանին հաջողվում է հեռացնել տարածքից: Հարկ է նկատել, որ պատգամավորի այդպիսի վարքը հաջորդել էր ընդամենը լրագրողի հարցին, որը հենց լրագրողի մասնագիտական գործունեության իրականացման ձևերից մեկն է: Տեսանյութի ուսումնասիրությունը վկայում է, որ պատգամավոր Քրիստինե Պողոսյանը նպատակ ուներ դիտավորությամբ Անի Գևորգյանին պատճառել մարմնական կամ առողջության այլ վնասվածք, որն ավարտին չի հասել անկախ Քրիստինե Պողոսյանի կամքից:

ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է՝ եթե անձը նախատեսել է մեկից ավելի հանցավոր հետևանքներից որևէ մեկի առաջացման հնարավորությունը, և նրա համար միևնույն է եղել, թե որ հետևանքը կառաջանա, ապա արարքը որակվում է ըստ փաստացի առաջացած հետևանքի: Եթե որևէ հետևանք չի առաջանում, ապա արարքը որակվում է որպես դիտավորության մեջ ընդգրկված, տվյալ իրադրությունում հնարավոր ամենաթեթև հանցագործության փորձ:

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Քննիչն իր իրավասության սահմաններում պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնել, եթե առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդումը ստացվել է իրավաբանական անձից: Միաժամանակ, ելնելով նույն օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասից՝ հայտնում ենք, որ նկարագրված առերևույթ հանցագործության հետ մեր առնչությունը պայմանավորված է լրագրողների իրավունքների պաշտպանությամբ, իսկ դեպքի մասին իրազեկվել ենք մամուլի միջոցներից, որոնց հղումները ներկայացված են սույն հաղորդման 1-ին բաժնում:

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Համապատասխան հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե

դրանով փաստվում է այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական»: Սույն հաղորդման 2-րդ բաժնում մանրամասն ներկայացված իրավական հիմքերն ու հիմնավորումները, մեր համոզմամբ, պարունակում է հանցավոր արարքներին համապատասխանելու վերաբերյալ բավարար նախնական իրավական գնահատական:

Ելնելով վերոգրյալից՝ պահանջում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 178-րդ հոդվածով սահմանված կարգով նախաձեռնել քրեական վարույթ: Հայտնում ենք, որ սույն հաղորդմամբ ներկայացվել են բոլոր այն հանգամանքները, որոնք մեզ հայտնի են և ամբողջությամբ բավարարում են վարույթ նախաձեռնելու համար անհրաժեշտ պայմաններին:

ԱՐՍԵՆ ԲԱԲԱՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ